

Վ. Ի. Լենինի ԵՐԿԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ
ԱՌԱՄՆԵՐԻ ՈՒ ԱՍՍՑԻԱՄՔՆԵՐԻ ՀԱՅՆԵՐՆ ԲԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

Լենինյան անգնահատելի գաղափարական ժառանգությունը սովորեցնում է ոչ միայն ակտիվորեն պայքարել նոր հասարակարգի կառուցման համար, այլև տիրապետել գրեթե և խոսելու, լեզվի պատկերավորման և ոճավորման տարբեր եղանակներից հմտորեն օգտվելու արվեստին: Այս տեսակետից Վ. Ի. Լենինի երկերի լեզուն և ոճն իսկական դպրոց են լեզվաբանների, գրականագետների, ժուռնալիստների, ագիտատորների և պրոպագանդիստների, գաղափարախոսական ճակատի բոլոր աշխատողների և առհասարակ մտավորականների համար:

Վ. Ի. Լենինի լեզվի, նրա հոստորական արվեստի վերաբերյալ բաղմամբով աշխատողներն են գրվել¹, որոնցում հեղինակները առանձնակի ուշադրություն են նվիրել լենինյան երկերում ճարտասանական դասական ոճաձևերի, դարձվածաբանական միավորների գործառույթյան առանձնահատկություններին: Զարգացնելով հրապարակախոսության հեղափոխական ոճի ավանդույթները՝ Լենինը իր երկերում հմտորեն օգտագործում է զանազան ճարտասանական հնարներ, փոխաբերական-սլոյարանական բաղմամբով արտահայտություններ՝ ստեղծելով խոսակցական և գրքային, հրապարակախոսական և գիտական, գեղարվեստական և գործնական-պաշտոնական ոճաձևերի իսկական համաձուլվածք: Լենինյան ճարտասանական հնարների համակարգի մեջ, ի թիվս իդիոմատիկ արտահայտությունների, թեմատիկ խոսքերի, բառախաղերի և այլն, մտնում են նաև առածներն ու ասացվածքները, որոնք առանձնահատուկ փայլ ու կենդանություն են հաղորդում նրա խոսքին: Վ. Ի. Լենինի իմաստուն և կրակոտ խոսքը այդ պատճառով էլ հենց ներգործում է մարդկանց ո՛չ միայն մտքի ու դատողության, այլև զգացմունքների, հույզերի ու երևակայության վրա: Զե՛ որ «առանց մարդկային հույզերի» երբեք չի եղել, չկա և չի կարող լինել ճշմարտության մարդկային ռոնեոմ»²:

Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս առածներին և ասացվածքներին՝ որպես քննադատության լեզվական ներգործուն միջոցների, որոնք ավելի համոզիչ են դարձնում փաստարկները քաղաքական, գիտական բանավեճերում: Առածներն ու ասացվածքները լենինյան երկերում ապացույցների համակարգի, պատմական և սոցիոլոգիական վերլուծության օրգանական մասն են: Նման առած-ասացվածքների թվին են պատկանում, օրինակ, Сытый голодного не разумеет (22, 355)³. Не до жиру, быть бы живу (46, 366), С миру по нитке—голому рубашка (6, 281) սոցիալական բովանդակություն ունեցող ժողովրդական արտահայտությունները, որոնք լենինյան կոնտեքստում ուր քաղաքական հնչեղություն են ստանում:

¹ А. Г. Цейтлин, Стиль Ленина-публициста, М., 1969; В. Г. Зинovieва, Фразеологические единицы как средство сатиры в работе В. И. Ленина, М., 1967; М. В. Нечкина, Художественные образы русской литературы в произведениях В. И. Ленина, М., 1969; К. В. Наумова, Литературное мастерство Ленина-публициста. Очерки и исследования, Львов, 1970; П. М. Фесуненко, Стиль произведения В. И. Ленина. Киев, 1972.

² Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 25, էջ 136:

³ Փակագծված թվերը նշում են Վ. Ի. Լենինի ԵԼԺ համապատասխան հատորը և էջը:

Վ. Ի. Լենինի երկերում առատորեն օգտագործված առածները և ասացվածքները ծառայում են տարբեր նպատակների՝ մերթ որոշակի դեր խաղալով դադափարարիտական հակառակորդների քաղաքական և բարոյական սկզբունքների մերկացման գործում, մերթ հանդես գալով որպես հեղինակի, ծաղրի, երգիծանքի կամ որևէ անձնավորության, իրադարձության, փաստի հեղինակային դնահատման միջոց։ Այսպես, «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» փրիլոսոփայական աշխատության մեջ բազմիցս կրկնվող *Сильнее кошки зверя нет* առածի օգնությամբ Վ. Ի. Լենինը սուր քննադատության և ծաղրի է ենթարկում Բազարովին և մյուս ռուս մախիստներին՝ Մարքսի և էնգելսի առաջադրած հիմնական հարցերից շեղվելու համար։ «Մկան համար կատվից ուժեղ գազան չկա։ Ռուսական մախիստների համար Պլեխանովից ուժեղ մատերիալիստ չկա։ Մի՞թե իսկապես միայն Պլեխանովը կամ առաջին անգամ Պլեխանովն է առաջադրել այն մատերիալիստական թեզիսը, որ գիտակցությունը մատերիալի ներքին կացությունն է»⁴։ «Բանավիճային նոթերում» Վ. Ի. Լենինը օգտագործում է *Молодец против овец, а на молодца — сам овца* ասացվածքը, որի միջնորդավորմամբ մերկացնում է լիկվիդատորների երկդիմի տակտիկան, այդ գործիչների վախկոտությունն ու երկչոտությունը, որոնք «խանդավառությամբ երկրպագում են «բացահայտ քաղաքական գործունեությունը», սակայն բանվորների առաջ հանդես են գալիս ոչ բացահայտորեն՝ լքառաջադրելով ոչ մի բացահայտ ծրագիր, տակտիկա, կազմակերպություն»⁵։

Վ. Ի. Լենինը երբեմն առածներն ու ասացվածքներն օգտագործում է իբրև տարբեր հրապարակախոսական հոգվածների վերնագրեր՝ *Мягко стелют, да жестко спать* (15, 114), *Поспешись — людей насмешись* (25, 180) և այլն։ Ժողովրդական պատկերավոր արտահայտությունները նրա երկերում հաճախ հանդես են գալիս նաև որպես քաղաքական լողունքներ, ինչպես ասենք. *Биться до последней капли крови* (7, 125), *Не на жизнь, а на смерть* (35, 200), *Смелость города берет* (6, 388) և այլն, որոնք կոչ են անում համառ և անզիջում պայքարի, դաստիարակում արիություն և սովորություն, հաղթանակի հասնելու համար բոլոր խոչընդոտները հաղթահարելու փնտրանքություն։

Ժողովրդական այլաբանական արտահայտությունների օգտագործման լենինյան եղանակներից մեկն էլ կենցաղային հարաբերություններ կամ բարոյախոսական թեմաներ արտացոլող առածների և ասացվածքների տեղափոխումն է գազափարաքաղաքական պայքարի ոլորտը, ինչը թույլ է տալիս բանավիճային առանձնակի սրություն և կենդանություն հաղորդել հեղինակի փաստարկներին ու դատողություններին։ Այնպիսի առածներ, ինչպես օրինակ. *На воре шапка горит* (24, 245), *За деревьями не видать леса* (34, 79), *Шила в мешке не утаишь* (7, 213) և այլն, բանավեճի ներգործուն միջոցներ են։

Լեզվական տարբեր արտահայտչամիջոցների օգտագործման լենինյան եղանակները, յուրօրինակ ռեաձևերը լրացուցիչ խնդիրներ են դնում Վ. Ի. Լենինի երկերի թարգմանիչների առջև, որոնք բնագրի բովանդակությունը, նրա գաղափարաքաղաքական ուղղվածությունը ստույգ վերարտադրելուց բացի, պետք է ընթերցողին հասցնեն նաև տեքստի հուզարտահայտչական բոլոր նրբերանգները։ Առածների ու ասացվածքների և այլաբանական մյուս արտահայտությունների համարժեք թարգմանությունն առանձնահատուկ նշանակություն ունի հեղինակի մտքերը, նախադասությունների փոխաբերական իմաստը, ենթատեքստը ճիշտ հասկանալու և մեկնաբանելու համար։ Սույն հոդվածի նպատակն է Վ. Ի. Լենինի երկերում հանդիպող առածների ու ասացվածքների և համապատասխան հայերեն թարգմանությունների լեզվաոճական

⁴ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 18, էջ 100։

⁵ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 20, էջ 258։

համեմատական վերլուծության հիման վրա վեր հանել խոսքի պատկերավորման նշված միավորների հայերեն թարգմանության սկզբունքներն ու եղանակները⁶, ցույց տալ, թե ի՞նչ օբյեկտիվ դժվարություններ են հաղթահարել հայ թարգմանիչները՝ լենինյան կենդանի լեզվի ուժն ու հմայքը պահպանելու համար:

Թարգմանության տեսության և պրակտիկայի տեսակետից առաձներն ու ասացվածքները նպատակահարմար է բաժանել 3 խմբի⁷. 1. առաձներն ու ասացվածքներ, որոնք ունեն իրենց համարժեքները թարգմանության լեզվում (այսինքն՝ համընկնում են դրանց հետ ինչպես բովանդակությամբ, այնպես էլ ձևով, բաղադրիչ տարրերով), 2. առաձներն ու ասացվածքներ, որոնք ունեն իրենց նմանակները (այսինքն՝ համապատասխանում են դրանց միայն բովանդակությամբ, բայց ոչ՝ ձևով), 3. առաձներն ու ասացվածքներ, որոնք թարգմանության լեզվում չունեն ո՛չ համարժեքներ, ո՛չ նմանակներ (այսինքն՝ ո՛չ լրակատար, ոչ էլ մասնակի համապատասխանություններ):

Առաջին խմբի առած-ասացվածքների թարգմանությունը գործնական դժվարություններ չի հարուցում: Լենինյան երկերում հանդիպող բազմաթիվ ժողովրդական արտահայտություններ ունեն իրենց բացարձակ համարժեքները հայերենում, որոնք էլ օգտագործվել են թարգմանության մեջ. *Поживем — увидим* (55, 331) — *Կապրենք՝ կտեսնենք* (55, 399), *Нет худа без добра* (43, 14) — *Ձկա չարիք առանց բարիքի* (43, 17), *Правда глаза колет* (20, 195) — *Ծղմարտությունն աչք է ծակում* (20, 239), *Рука руку моет* (21, 367) — *Ձեռքը ձեռք է լվանում* (21, 451), *Дыма без огня не бывает* (15, 84) — *Առանց կրակ ծուխ չի լինի* (15, 102), *Где тонко, там и рвется* (14, 222) — *Որտեղ բարակ է, այնտեղ էլ կտրվում է* (14, 277), *Куй железо, пока горячо* (52, 86) — *Երկաթը տաք-տաք կծեծեն* (52, 100), *Лучше поздно, чем никогда* (7, 43) — *Լավ է ուշ, քան երբեք* (7, 54), *Не все то золото, что блестит* (25, 190) — *Ամեն փալլոդ բան ոսկի չէ* (25, 227), *Не рой другому ямы, сам в нее упадешь* (20, 51) — *Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի նրա մեջ* (20, 62), *Шила в мешке не утаишь* (7, 213; 21, 102) — *Մախաթը տոպրակում չի պարտակվի* (7, 269), *Բիզը տոպրակի մեջ չի պարտակվի* (21, 127), *Семь раз примерь, один раз отрежь* (44, 108) — *Յոթ անգամ չափիր, մեկ կտրիր* (44, 129), *Слово — серебро, молчание — золото* (31, 368) — *Խոսքը արծաթ է, լռությունը՝ ոսկի* (31, 353) և այլն:

Ռուսական և հայկական առած-ասացվածքների բովանդակության և արտահայտության պլանների համապատասխանությունը որոշ դեպքերում կարող է պայմանավորված լինել կամ մեկ ընդհանուր ծագումնաբանական աղբյուրի գոյությամբ, որից սերվել են և՛ ռուսական, և՛ հայկական արտահայտությունները, կամ ռուսերենից կատարված փոխառությամբ: Դրան կարող էին նպաստել ռուս և հայ ժողովուրդների քաղաքական, տնտեսական և մշակութային սերտ կապերը, որոնք գոյություն են ունեցել դարերի վեր և հատկապես բուռն զարգացում ապրել 1828 թ. Արևելյան Հայաստանը Ռուսաստան-

6 Թե՛ իդիոմատիկ արտահայտությունները, թե՛ թեկավոր խոսքերը և թե՛ առաձներն ու ասացվածքները թարգմանության ժամանակ պահանջում են տարբերակված մոտեցում, որ բըլսում է խոսքի պատկերավորման նշված միավորների ծագումնաբանական և կառուցվածքամասնաբանական հատկանիշներին: Թեկավոր խոսքերի թարգմանության մասին տե՛ս Ա. Սարգսյան, Թեկավոր խոսքերը Վ. Ի. Լենինի երկերում և դրանց հայերեն թարգմանությունը («Սովետական մանկավարժ», 1984, № 6, էջ 69—78):

7 З. Е. Роганова, Пособие по переводу с немецкого языка на русский, М., 1961, с. 106; Т. Р. Левинская, А. М. Фитерман, Теория и практика перевода с английского языка на русский, М., 1963, с. 106—107.

նի հետ միավորվելուց հետո: Սակայն մեծ մասամբ տարբեր ժողովուրդների լիզոններում համարժեք առած-ասացվածքների առկայությունը բացատրվում է դիտակցության և լեզվի մեջ օբյեկտիվ իրականության արտացոլման համամարդկային ձևերի միասնությամբ, ժողովուրդների կուլտուր-պատմական փորձի ընդհանրությամբ, որի շնորհիվ տարբեր ժողովուրդների պատկանող համագորշատ առած-ասացվածքներ կարող են լինել ոչ թե փոխառություններ, այլ ինքնուրույն, անկախ գոյություն ունեցող համարժեքներ: Տարբեր ժողովուրդներին, այդ թվում նաև ռուս և հայ ժողովուրդների առածների ու ասացվածքների համապատասխանության աստիճանը միատեսակ չէ: Ամենից հաճախ դրանք համընկնում են իմաստով՝ բաղկացած լինելով տարբեր բաղադրիչ տարրերից ու սլատկերներից:

Համանման առած-ասացվածքները, որոնք կազմում են երկրորդ խումբը, առանձին դեպքերում փոխարինվել են իրենց նմանակներով: Օրինակ. Пока солнце взойдет, роса очи выест (43, 176)—Մինչև առուն ջուր գա, գորտի աչքը դուրս կգա (43, 210), На воре шапка горит (5, 86)—Գող՝ սիրտը դող (5, 106), Всякому овощу свое время (16, 271)—Ամեն բան իր ժամանակն ունի (16, 331):

Բերված առած-ասացվածքային միջլեզվական զուգբերի համեմատական վերլուծությունը կոնտեքստի մեջ ցույց է տալիս, որ գրանցում նկատվող կառուցվածքային և բաղադրիչային տարբերությունները գրեթե չեն անդադարձել այդ արտահայտությունների իմաստառճական համապատասխանության լիարժեքության վրա, հետևաբար, դրանց օգտագործումը թույլ է տվել ապահովելու թարգմանության համարժեքությունը բնագրին: Սակայն, ինչպես ցույց է տալիս քննական վերլուծությունը, հայերենում իրենց նմանակներն ունեցող ռուսական առած-ասացվածքների միայն աննշան մասն է թարգմանության մեջ փոխարինվել դրանցով: Դա բացատրվում է նրանով, որ նույնիսկ այն դեպքերում, երբ բնագրի առածներն ու ասացվածքներն ունեն իրենց իմաստային զուգահեռները հայերենում, վերջիններիս օգտագործման հնարավորությունը թարգմանության մեջ սահմանափակված է երկու կարևոր գործոններով. ա) նմանակներում ազգային (աշխարհագրական, պատմական, կենցաղային և այլն) յուրահատուկ իրույթների (реалии)⁹ առկայությամբ, հայկական հատուկ անունների հիշատակությամբ և այլն, բ) ռուսական և հայկական առած-ասացվածքների ոճական երանգի և հուզարտահայտչական ներդրողության անհամապատասխանությամբ՝ խոսքային-գործառական տարբեր ուրույնների պատկանելու հանգամանքով: Այսպես, Վ. Ի. Լենինի երկերում բազմիցս օգտագործված И волки б были сыты и овцы целы ռուսական առածին իր տրամաբանական բովանդակությամբ համապատասխանում է Այնպես աղա, որ՝ ո՛չ խոբովածն այրվի, ո՛չ շամփուրը հայկական առածը¹⁰: Սակայն թարգմանիչները միանգամայն իրավացիորեն չեն օգտվել այդ նմանակից, քանի որ այն հիշատակում է հայկական կենցաղի հետ զուգորդվող, հայ ժողովրդի հոգեբանական նկարագիրն արտացոլող ազգային յուրահատուկ իրույթներ: Թարգմանության մեջ այդ համանշանակ ձևի օգտագործումը կըխախտեր բնագրի ազգային երանգավորումը, խիստ կհայացներ տեքստը: Հեղինակի անունից կմատուցվեր զուտ հայկական ասացվածք, որպիսին նա չէր կարող օգտագործել:

Поспешить—людей насмешить ռուսական առածը, որով Վ. Ի. Լենինը վերնագրել է իր հողվածներից մեկը, հայերենում ունի Վազգդիմ աղա

⁹ «Армянские пословицы и поговорки», М., 1973, с. 10 (предисловие Г. Карапетяна).

¹⁰ «Реалия» բառը, որ նշանակում է տվյալ ժողովրդին կամ երկրին յուրահատուկ առարկաներ ու երևույթներ, հայերենում չունի իր համարժեքը: ՀԱՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի տիպարական-զուգահրական հետազոտությունների բաժինը առաջարկում է իրոյք անվանումը:

¹⁰ «Армянские пословицы и поговорки», с. 7.



չի լինի համանշանակ ձևը, որը շատ գործածական է, սակայն, ի տարրերու-
թյուն բնագրի արտահայտության, բարբառային է և պատկանում է խոսքային-
գործառական այլ ոլորտի: Նրա օգտագործումը անխուսափելիորեն կհանգեց-
նե՞ր ոչ միայն բնագրի ոճական ուղղվածության խախտմանը, այլև իմաստային
որոշակի շեղման: Ուստի զարմանալի չէ, որ թարգմանիչները գիտակցաբար
հրաժարվել են հայկական պատրաստի նմանակից:

Լիարժեք նմանակների բացակայության դեպքում, յուսինքն՝ երբ գոյու-
թյուն ունեցող պատրաստի միավորների օգտագործումը սահմանափակված է
նշված երկու գործոններով, թարգմանիչները դիմել են թարգմանչական այլ
հնարներ, գլխավորապես դարձվածաբանական պատճենման եղանակին: Օրի-
նակ. И волки б были сыты и овцы целы (12, 288)—նվ գայլերը կուշտ
լինեն և գառները՝ անվնաս (12, 344), Поспешите—людей насмешите (25,
180)— Կաճապարես, մարգինաց վրադ կծիծաղեցնես (25, 215), С миру по
нитке—голому рубашка (6, 281)¹¹—Տնից մի թելիկ, տկորին շապիկ (6,
351), Каков поп, таков и приход (15, 128)¹²—Տնտեսին ինչ լինի, ծուխն
էլ էն կլինի (15, 156) և այլն: Բերված օրինակներից դժվար չէ նկատել, որ
թարգմանիչներին հաջողվել է դարձվածաբանական պատճենման եղանակով
համարժեքորեն վերարտադրել ռուսական առածների ինչպես իմաստը, այն-
պես էլ պատկերավորությունը: Առանձին դեպքերում հաջողվել է նույնիսկ հայ-
կական առածներին բնորոշ շարահյուսական ձևերի, կառուցվածքային պատ-
րաստի կաղապարների օգտագործման շնորհիվ պահպանել բնագրի առածների
հանգավորումն ու արտահայտման ձևերի հղկվածությունը:

Համանման ալլաբանական արտահայտությունների թարգմանությունների
մեջ, ցավոք, հանդիպում են նաև մեխանիկական անհաջող պատճենումներ,
որոնք չեն հաղորդում առածների և ասացվածքների՝ որպես դարձվածաբա-
նական իմաստների, հատկանիշները, դրանց հակիրճությունն ու հղկվածու-
թյունը, մտքի ավարտունությունն ու պատկերավորությունը, երբեմն էլ ճիշտ
չեն վերարտադրում բնագրի իմաստը: Այսպես, С волками жить—по волчьим
выть (44, 226) առածը, որի ընդհանուր իմաստն է՝ ում մոտ ապրես, նրա ստ-
վորվածությունը կառնես¹³, թարգմանված է՝ Գայլերի նետ ապրողը պետք է գայ-
լերի պես ռռնա (44, 27), որը միանգամայն այլ միտք է արտահայտում: Նշված
ռուսական առածը թերևս կարելի էր թարգմանել. Գայլերի նետ ապրես՝ գայ-
լերի պես ռռնալ կտավորես, որը ճիշտ է հաղորդում բնագրի թե՛ այլաբանական
իմաստն ու պատկերավորությունը, թե՛ հանգավորումն ու ոճական ներգործու-
թյունը: Նման բռնադրուսիկ պատճենումների թվին են պատկանում նաև հե-
տևյալ օրինակները, որտեղ սխալ է ընկալվել բնագրի տրամաբանական շեշտն
ու ալլաբանական իմաստը. Кто сеет ветер, пожнет бурю (8, 174)—Ով
քամի ցանի, նա էլ փոթորիկ կհնձի (8, 213) (փոխանակ՝ Քամի ցանողը փո-
թորիկ կհնձի), Конец венчает дело (18, 114)—Վախճանը պսակում է գոր-
ծը (18, 137)¹⁴ (ճիշտ ձևն է՝ Վախճա՛նն է պսակում գործը), Это не фунт
изюму (42, 249)—Դա մի ֆունտ չամիչ չէ (42, 310) (փոխանակ՝ Դա չամիչ
ուտել չէ) և այլն: Բերված անհաջող բառացի թարգմանությունների օրինակ-
ները վկայում են, որ ղրանցում տեղ գտած իմաստաոճական թերությունների
պատճառը ոչ թե պատճենման բուն եղանակն է, այլ ալլաբանական արտա-
հայտության ենթատեքստի սխալ ըմբռնումը: Նույն այդ բառացի թարգմանու-

¹¹ Սրա հայկական նմանակն է՝ Հարուր միրուրից մի մի մաղ—կլինի սաղ միրուր (տե՛ս «Армянские пословицы и поговорки», с. 124)։

¹² Սրան համանշանակ է «եռուփը գլորվել» պոետուն է գտել» (տե՛ս Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանը»)։

¹³ Տե՛ս Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանը»։

¹⁴ Այս սխալը թերևս գալիս է Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանից» (տե՛ս էջ 392)։
Վ. Ի. Լենինի նրկերի հայերեն 4-րդ հրատ. մեջ տրամաբանական շեշտը ճիշտ է դրված՝ Վե՛րջն
է պսակում գործը (14, 139)։

թյան եղանակը կիրառելով, ինչպես տեսանք, հնարավոր էր խուսափել տեղ գտած սխալներից:

Ինչպես ցույց է տալիս համեմատական վերլուծությունը, թարգմանիչները երբեմն պատճենման եղանակին են դիմել նաև այն դեպքերում, երբ հայերենում առկա են եղել բնագրի արտահայտությունների իմաստառճական-գործառական նմանակները: Այսպես՝ Волков бороться в лес не ходит (34, 321) առածը թարգմանված է դարձվածաբանական պատճենման եղանակով՝ Գայլից վախեցողն անտառ չի գնա (34, 405), չնայած հայերենում կա նրա «Ծտից վախեցողը կորեկ չի ցանի»¹⁵ լիարժեք նմանակը: Կարելի է արդյոք նման դեպքերում թարգմանությունը սկզբունքորեն ճիշտ համարել: Այս հարցում մասնագետները տարբեր, երբեմն իրարամերժ կարծիքներ են հայտնում: Այսպես, Ա. Ռեֆորմատսկին գտնում է, որ առածներն ու ասացվածքներն անիմաստ է պատճենել: Ավելին, ըստ նրա, թարգմանության յուրաքանչյուր դեպք հարկավոր է ընդհանրապես դիտել «որպես իդիոմ», այսինքն՝ թարգմանությունն իրականացնել միայն պատրաստի համարժեքների կամ նմանակների օգնությամբ¹⁶: Հակառակ տեսակետ է պաշտպանում Կ. Չուկովսկին, որն ընդգծում է. «Հարկավոր է ձգտել օտարերկրյա առածներն ու ասացվածքները ըստ հնարավորին թարգմանել բառացի, այլ ոչ թե դրանք փոխարինել ռուսական զուգահեռներով: Եթե, օրինակ, Հայնեի մոտ ասված է. «Խաշված կատուն վախենում է եռացող կաթսայից», չի կարելի թարգմանել. «Ահաբեկված ագռավը թփից էլ է վախենում», ...որովհետև ժողովրդական առածները նրանով էլ հենց թանկ են, որ արտացոլում են ինքնօրինակ գեղապատկերներ, մտածողության ազգային ձևեր»¹⁷: Այս կարծիքին համաձայն է Ա. Ֆյոդորովը: Խոսելով Կ. Չուկովսկու հիշյալ հանձնարարականի մասին, նա նշում է, որ մի շարք դեպքերում այն կարող է հաջողությամբ կիրառվել: «Ամենուրեք, որտեղ նման արտահայտությունների ստույգ... վերարտադրման շնորհիվ կարող է ստեղծվել իսկական, կենդանի առածի կամ ասացվածքի տպավորություն, այդ խորհուրդն արդարացնում է իրեն: Թեև ռուսերենում չկա «Խաշված կատուն վախենում է եռացող կաթսայից» առածը, բայց այն կարող էր գոյություն ունենալ այդ ձևով, ուստի այստեղ բառացի թարգմանությունը գործառական տեսակետից նաև ստույգ թարգմանություն է»¹⁸:

Մեր կարծիքով, միանգամայն իրավացի են երկրորդ տեսակետի կողմնակիցները: Երբեմն առածի նշանակությունը, անմիջականորեն բխելով նրա բաղադրիչ տարրերի արտահայտած իմաստներից, այնքան պարզ ու հասկանալի է թարգմանության լեզվի կրողների համար և այնքան հեշտ է ենթարկվում պատճենման, որ նրա փոխարինումը պատրաստի համանշանակով ավելորդ է դառնում:

Ժողովրդական արտահայտությունների բառացի թարգմանության սկզբունքը բացառող մասնագետները փաստորեն հաշվի չեն առնում լեզվական այն իրողությունը, որ տարբեր լեզուներում համարժեքներ ունեցող բազմաթիվ առած-ասացվածքներ ոչ այլ ինչ են, եթե ոչ լեզվի մեջ վաղուց արմատացած պատճենումներ, որոնք իբրև այդպիսիք այլևս չեն ընկալվում: Լինելով մի ժողովրդի սեփականությունը, նրանք պատճենման եղանակի հմուտ օգտագործման շնորհիվ հարստացնում են մեկ այլ ժողովրդի լեզուն, հղկում նրա արտահայտչամիջոցները, ընդլայնում ընթերցողների գեղագիտական ընկալման շրջանակը:

Թարգմանության տեսակետից ամենամեծ հետաքրքրությունը ներկայացնում է 3-րդ խմբի առած-ասացվածքների վերարտադրումը, որոնք թարգմա-

¹⁵ См. «Армянские пословицы и поговорки», с. 109.

¹⁶ А. А. Реформатский, Лингвистические вопросы перевода («Иностранные языки в школе», 1952, № 6, с. 19).

¹⁷ К. И. Чуковский, Высокое искусство, М., 1968, с. 71.

¹⁸ А. В. Федоров, О художественном переводе, Л., 1942, с. 79.

նության լեզվում չունեն ո՛չ համարժեքներ, ո՛չ նմանակներ: Ինչպես ցույց է տալիս համեմատական վերլուծությունը, բնագրի համանման արտահայտությունների գերակշռող մասը թարգմանված է դարձվածաբանական պատճենման եղանակով, ինչպես օրինակ Рыбак рыбака видит издалека (12, 348) — Զկնորսը ձկնորսին հեռվից կճանաչի (12, 420), Там лучше, где нас нет (55, 66), Լավ է այնտեղ, որտեղ մենք չկանք (55, 80), Хорошего понеможку (9, 331) — Լավից՝ քիչ-քիչ (9, 409), Слышал звон, да не знает где он (1, 165) — Լսել է մի ձայն, բայց չի հասկացել, թե որտեղից է այն (1, 193), Смелость города берет (6, 388) — Համարձակությունը քաղաքներ է դրավում (6, 480), Насильно мил не будешь (7, 97) — Զոռով սիրելի չես լինի (7, 124), Дорого яичко в христов день (14, 35) — Զատկին ձուն թա՛նկ է լինում (14, 43), Дурной пример заразителен (8, 227) — Վատ օրինակը վարակիչ է (8, 282), В гостях хорошо, а дома лучше (55, 12) — Զյուր լինելը լավ է, տանը ավելի լավ (55, 13) և այլն:

Բերված հայկական պատճենները, որոնք համարժեքորեն հաղորդում են բնագրի բովանդակությունն ու պատկերավորությունը, ցույց են տալիս, որ բառացի թարգմանությունը կարող է հաջողությամբ կիրառվել այն դեպքում, երբ պատճենման հետևանքով կազմված արտահայտության ալլաբանական իմաստը ճիշտ է ընկալվում թարգմանության լեզվի կրողների կողմից, չեն խախտվում թարգմանության լեզվի բառակապակցման պարտադիր կանոնները, ստեղծվում է կենդանի, պատկերավոր արտահայտության տպավորություն: Ո՞րպեսզի նման նախադրյալը — նշում են բուլղարացի տեսաբաններ Ս. Վլախովը և Ս. Ֆլորինը, — դարձվածաբանական միավորի նշանակության բավարար պատճառաբանվածությունն է (мотивированность) նրա բաղադրիչների իմաստներով: Այսինքն՝ պատճենումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ բառացի թարգմանությունը կարող է ընթերցողին հասցնել ամբողջ դարձվածքի իսկական բովանդակությունը (և ոչ թե նրա բաղադրիչների իմաստները)¹⁹:

Ինչ վերաբերում է այն առած-ասացվածքներին, որոնց ընդհանուր բովանդակությունը հնարավոր չէ բխեցնել դրանց բաղադրիչների իմաստներից, ապա դրանց պատճենումը հանգեցնում է կամ անհեթեթության, կամ խոսքային ալոպիզմի: Օրինակ. Назвался груздем, полезай в кузов (5, 122) — Եթե անունդ սունկ է, մտիր զամբուլ (5, 152), Голод не тетка (38, 363) — Սովը մորաքույր չէ (38, 452), За битого двух небитых дают (23, 364) — Մի ծեծվածի դիմաց երկու չծեծված են տալիս (23, 446), Сказка про белого бычка (14, 30) — Հեքիաթ սպիտակ արջառի մասին (14, 36), Лес рубят — щепки летят (34, 323) — Անտառը հատելիս տաշեղներ կթռչեն (34, 407) և այլն:

Նրորդ խոմբը կազմող առած-ասացվածքների մեջ առանձնանում են խիստ ընդգծված ազգային երանգավորում ունեցող արտահայտությունները, որոնք սովորաբար համարժեքներ կամ նմանակներ չեն ունենում մյուս լեզուներում: Ինչպես նշում է Լ. Ս. Բարխուդարովը, «...թարգմանության մեջ ամենամեծ դժվարությունները ծագում են այն ժամանակ, երբ ելակետային լեզվի տեքստում նկարագրվող բուն իրադրությունը բացակայում է թարգմանության լեզվի կրողների լեզվական փորձում, այլ կերպ ասած, երբ ելակետային տեքստում նկարագրվում են այսպես կոչված «խրուլթներ», այսինքն՝ տվյալ ժողովրդին և երկրին յուրահատուկ առարկաներ ու երևույթներ»²⁰, Այսպես, Վ. Ի. Լենինի «Ոչ-քննադատական քննադատություն» հոդվածում հանդիպում է В огороде бузина, а в Киеве дядька (3, 615) աշխարհագրական իրակու-

19 С. Влахов, С. Флорин, Непереводимое в переводе, М., 1980, с. 194—195.

20 Л. С. Бархударов, Язык и перевод, М., 1975, с. 14.

թյուն պարունակող առածը, որը հայերենում չունի համարժեք կամ համանշանակ ձևեր և չի ենթարկվում պատճենման, քանի որ ռուսական արտահայտության ենթատեքստը պատճառաբանված չէ նրա բաղադրիչների իմաստներով: Տվյալ առածում ա շաղկապը կատակային ձևով միավորում է տրամաբանորեն անզուգահեռի երկու նախադասություններ, որի հետևանքով արտահայտությունը կատարյալ անհեթեթություն է իմաստ ունի և ասվում է որևէ մեկի դատողությունների անհետևողականության, խոսքի անտրամաբանականության դեպքում: Օրինակ, «Г-н Скворцов иллюстрирует своими рассуждениями известное изречение: в огороде бузина, а в Киеве дядька» (3, 615). Քանի որ տրամաբանական որոշակի բովանդակության բացակայությունը առածի մեջ բացառում էր նույնիսկ բացատրական թարգմանության հնարավորությունը, թարգմանիչները հարկադրված այն թողել են առանց թարգմանության. «Պ-րն Սկվորցովն իր դատողություններով լուսաբանում է հայտնի ասացվածքը՝ в огороде бузина, а в Киеве дядька (3, 778). Իհարկե, նման դեպքերում անհրաժեշտ է տողատակի ծանոթագրությամբ բացատրել ռուսական արտահայտության ընդհանուր նշանակությունը: «Москва от копеечной свечки сгорела» ազգային երանգ ունեցող ասացվածքը Լենինն օգտագործում է փոփոխված ձևով՝ այն «հարմարեցնելով» կոնտեքստի կոնկրետ խնդիրներին. Выборы в Думу и первая неделя заседаний и работ оппозиционной Думы сыграли роль «копеечной свечки», от которой загорелся пожар по всей стране (13, 208). Աշխարհագրական իրույթ պարունակող տվյալ ասացվածքը անիզելիորեն կապված է Ռուսաստանի պատմության հետ: Պատմական տարեգրություններում հիշատակվում է բռնկված մի քանի մեծ հրդեհների մասին: 1493 թ. Մոսկվայում հրդեհ սկսվեց եկեղեցում վառվող մոմից, իսկ 1737 թ.՝ մասնավոր տան մոմից²¹: Արտահայտության իմաստը պարզ է՝ մանրուքը, աննշան պատճառը կարող են մեծ անխորժուկություններ բերել: Միայն պատճենումը կարող է համարժեքորեն վերարտադրել ասացվածքի ինչպես իմաստը, այնպես էլ ազգային երանգավորումը, պահպանել նրա գույությունները (ассоциации) Ռուսաստանի պատմության հայտնի իրադարձությունների հետ. «Դումայի ընտրությունները և օպոզիցիոն Դումայի նիստերի ու աշխատանքների առաջին շաբաթը խաղացին «կոպեկանոց մոմի» դեր, որից հրդեհ առաջացավ ամբողջ երկրում» (13, 253):

Հետևաբար, բնագրի ասացվածքի բաղադրիչ տարրերը պահպանելու անհրաժեշտությունը ծագել է հատկապես այն դեպքերում, երբ նրանում հիշատակվել են պատմական իրադարձություններ կամ աշխարհագրական անուններ, որոնք անհնարին են դարձնում պատրաստի իմաստային նմանակների օգտագործումը (եթե նույնիսկ դրանք գոյություն ունեն, սակայն օժտված են ազգային այլ երանգավորումով), քանի որ թարգմանության համարժեքությունը ենթադրում է ռեալական բոլոր ցուցանիշների, այդ թվում և ազգային երանգի նույնականություն: Այդ պատճառով էլ, ինչպես նշում է Ա. Ֆյոդորովը, ֆրանսիական Paris ne s'est pas fait un jour ասացվածքը անհրաժեշտ է թարգմանել «Փարիզը՝ մեկ օրում չի կառուցվել», իսկ իսպանական No so gano Zamora en una hora ասացվածքը՝ «Սամորան մեկ ժամում չի նվաճվել» և տվյալ արտահայտությունները ռուսերեն թարգմանելիս չի կարելի օգտագործել «Մոսկվան մեկ օրում չի կառուցվել» ռուսական պատրաստի ասացվածքը, որն ունի նույն այլաբանական իմաստը, սակայն հակասում է բնագրի ազգային յուրահատկություններին²²: Ազգային երանգ ունեցող դարձվածքները թարգմանելիս, ընդգծում են Ս. Վլադիսլավը և Ս. Ֆլորինը, ոչ մի դեպքում չի կարելի անգլիական երանգավորումը փոխարինել ռուսականով, կամ ֆրանսիականը՝ բուլղարականով: Ավելի լավ է, գրում են նրանք, ընդհանրա-

²¹ «Русские пословицы, поговорки и крылатые выражения», М., 1979, с. 59.

²² А. В. Федоров, Основы общей теории перевода, М., 1983, с. 165.

պես հրաժարվել բնագրի ազգային ղգեստավորումից, քան թե որևէ մեկին այլ ազգի տարազ հագցնել²³,

Առածի կամ ասացվածքի ազգային երանգավորումը կարող է պայմանավորված լինել ոչ միայն տարբեր ազգային իրակությունների հիշատակությամբ, այլև բուն արտահայտության բնութքով, որն այս կամ այն ձևով կարող է արտացոլել տվյալ ժողովրդի պատմությունը, կենցաղն ու սովորությունները: Այսպես, Վ. Ի. Լենինի երկերում երեք անգամ օգտագործված Бюджет и на нашей улице праздник առածը (30, 339; 48, 180; 49, 390) աղգային որևէ իրակություն չի պարունակում, սակայն անխղիճորեն կապված է Ռուսաստանի պատմության հետ: Այն արտացոլում է ռուս ժողովրդի հնագույն կենցաղային-ծիսական սովորություններից մեկը, երբ ընդհանուր ժողովրդական տոներից բացի, յուրաքանչյուր փողոց ուներ իր առանձին տոները, որոնք ուղեկցվում էին ուրախ խաղերով, պարերով և հյուրասիրությամբ: Այդպիսի տոներին հրավիրվում էին նաև մյուս փողոցների բնակիչները, և ուրախությունն ընդհանուր էր դառնում: Սակայն հրավիրվածներից յուրաքանչյուրը գիտեր, որ կգա ժամանակ, երբ իր փողոցում էլ տոն կլինի: Ասացվածքի փոխաբերական իմաստը հետևյալն է. մենք էլ հաղթանակ կտանք, մենք էլ ուրախ օրեր կապենք: Սակայն հիշյալ ասացվածքն ըստ իմաստի թարգմանելը սխալ կլինի, քանի որ ռուս ժողովրդի ազգային ավանդություններն արտացոլող ասացվածքը կդադարեր այդպիսին լինելուց: Մինչդեռ նրա պատճենումը՝ «Մեր փողոցում էլ տոն կլինի» (40, 180), որին իրավացիորեն դիմել են թարգմանիչները, ճիշտ է հաղորդում բնագրի բովանդակությունը, պատկերավորությունը և աղգային երանգը:

Ինչպես երևում է բերված օրինակից, թարգմանիչները համանման առած-ասացվածքները թարգմանելիս ձգտել են պահպանել դրանցում արտացոլված աղգային ավանդությունների յուրահատկությունը, ժողովրդական արտահայտությունների հիմքում ընկած պատկերները շտեղափոխել պատմական կամ սոցալային մի միջավայրից մյուսը, հաղորդել դրանց ինքնատիպությունն ու գունդությունը:

Վ. Ի. Լենինի երկերում հանդիպող առածների ու ասացվածքների հայերեն թարգմանությունները վկայում են, որ թարգմանիչները դրանք վերարտադրելիս հանդես են բերել ստեղծագործական մոտեցում: Եթե ասացվածքի արտահայտած իմաստի յուրահատկությունն անմիջականորեն բխում է այդ ասացվածքը ստեղծած ժողովրդի ազգային հոգեբանությունից, ապա թարգմանության մեջ պահպանվել է նաև ասացվածքի ձևը և նրանով արտահայտվող աղգային երանգը: Իսկ եթե ասացվածքի հիմքում ընկած պատկերն ունեցել է ընդհանրական բնութք, այսինքն՝ բովանդակությամբ «միջազգային» է և ձևով «ազգային», ապա թարգմանության մեջ հիմնականում գտնվել է համապատասխան ասացվածք, որը նրան համարժեք է իմաստով և միևնույն ժամանակ չի բխում թարգմանի ժողովրդի հոգեբանական կերտվածքից, նրա աղգային նկարագրից: Այսինքն՝ թարգմանիչները առաջնորդվել են այն ճիշտ սկզբունքով, որ թարգմանչական պրակտիկայի այս բնագավառում աղգային յուրահատկությունների պահպանման հիմնական չափանիշ պետք է լինի անմիջական կապը ժողովրդի ազգային հոգեբանության հետ: Եթե որևէ ասացվածքի աղգային յուրահատկությունը հատուկ է միմիայն այդ ժողովրդին, ապա պետք է փորձել վերստեղծել այդ արտահայտության ձևը, եթե անգամ այն խորթ հնչի հայերեն և տարածում չգտնի մեր լեզվում: Մյուս կողմից, թարգմանիչը պետք է խուսափի այնպիսի «համարժեքներից», որոնք անմիջականորեն արտացոլում են իր ժողովրդի ազգային նկարագիրը, նրա կենցաղն ու հոգեբանությունը և դրանով իսկ բնագրի աղգային երանգը փոխարինում են սոսկ իր ժողովրդին հատուկ աղգային երանգով: Այս բոլոր սկզբունքները պահպանելու համար, թարգմանիչը բնագրի և թարգմանության լեզուներին լավ տիրապե-

23 С. В. Влахов и С. Ф. Флорин, *նշվ. աշխ.*, էջ 204:

տեղում բացի, պետք է ունենա նաև արտալեզվական որոշակի ինֆորմացիա, այլ կերպ ասած՝ լեզվաբանական գործոններից բացի, նա պետք է գիտենա «այն իրական կացությունը, այն արտալեզվական իրականությունը, որ տվյալ տեքստում բնութագրվում է»²⁴:

Ինչպես ցույց է տալիս քննության առնված նյութը, առած-ասացվածքների վերարտադրման ժամանակ հաջողությամբ կիրառվում է նաև մի ուրիշ, շատ յուրահատուկ թարգմանական հնար, որը Վ. Ի. Լենինի երկերի հայերեն թարգմանություններում բավական հաճախ է հանդիպում: Դա հայկական նոր առածի ստեղծումն է բնագրի առածի տրամաբանական բովանդակության հիման վրա՝ նույն հուզարտահայտչական ներգործությամբ և ոճական երանգով, բայց՝ հայկական առածներին հատուկ շարահյուսական կառուցվածքով ու հանգավորումով: Երբ հայերենում չի գտնվել բնագրի արտահայտության համարժեք կամ համանշանակ ձևը և առածի բաղադրիչ տարրերի իմաստային սերտաձման հետևանքով բացառվել է պատճենման հնարավորությունը, թարգմանիչները երբեմն դիմել են «անհատական» նմանակների ստեղծմանը: Այսպես, *Милые бранятся—только темятся* (5, 53) առածի իմաստային միջուկի հիման վրա ստեղծվել է Սիրելիների «չուր» «չան» է (5, 65) առածը, որտեղ տարրեր, բայց տրամաբանորեն զուգահեռիչ պատկերների օգնությամբ արտահայտվում է նույն ընդհանուր իմաստը: Համանշանակ ձևեր են ստեղծվել նաև հետևյալ առած-ասացվածքների համար. *Взялся за гуж—не говори, что не дюж* (37, 259; 48, 221) — Վերցրածդ բեռը ուսից մի գցիր (37, 319) կամ՝ Վերցնելով լախտին, մի ասա չեմ հաղթի (48, 273), *Куда ни кинь—все жлин* (15, 61) — Ոնց շուռ ես գալիս՝ բան դուրս չի գալիս (15, 74), *За что купил, за то и продаю* (1, 196) — Ինչ լսել եմ, այն էլ ասում եմ (1, 231) և այլն:

Որոշ դեպքերում, նմանակներ ստեղծելիս, թարգմանիչներն օգտագործել են բնագրի առածի առանձին բաղադրիչներ, ուսական ժողովրդական ասույթի ոգով ձևավորելով ինքնակերտ առածը, բայց նրա բովանդակությունն արտահայտելով հայկական լեզվամտածողությանը հարազատ պատրաստի կաղապարներով: Օրինակ. *На ловца и зверь бежит* (12, 374) — Լավ որսորդի որսն իր ոտքով է գալիս (12, 450), *Мягко стелют, да жестко опать* (15, 114) — Փափուկ բարձ են դնում, բայց կոշտ է՝ քնել չի լինում (15, 140), *Что у кого болит, тот о том и говорит* (18, 51) — Ամեն մարդ իր ցավից է խոսում (18, 59): Թարգմանական այս հնարի առավելությունն այն է, որ համարժեքորեն վերարտադրվում է բնագրի ընդհանուր իմաստն ու պատկերավորությունը և հարստանում է մայրենի լեզուն: Բերված ինքնաստեղծ առածների որոշ մասը այնքան նման է ժողովրդական բանահյուսության ստեղծագործությունների, որ երբեմն դժվար է որոշել՝ դրանք «կեղծ» են, թե «բնական»: Դա, իհարկե, վկայում է թարգմանիչների բարձր վարպետության մասին:

Սակայն հարկ է նշել, որ բոլոր դեպքերում չէ, որ ինքնաստեղծ նմանակը համարժեքորեն հաղորդում է բնագրի ներքին ուժական երանգը: Այսպես, *Не до жиру, быть бы жиру* (46, 366) առածը թարգմանվել է՝ Պե՜տք է մեզ մեղք ու կարգ, միայն լինի մի կտոր հաց (46, 454): Նկատենք, որ թարգմանիչն հաջողվել է միանգամայն տարբեր պատկերների միջոցով ստեղծել համանշանակ իմաստային իրադրություն, որ ձևավորվել է հայկական կենցաղին և հոգեբանությանը ավելի բնորոշ առարկաների և հասկացությունների օգնությամբ: Բայց թարգմանիչը չի կարողացել իր ստեղծած պատկերներով արտահայտվող բովանդակությունը ամփոփել շարահյուսական համապատասխան ձևի մեջ: Դրան հասնելու համար հարկավոր էր օգտվել հայկական առած-ասացվածքային պատրաստի կաղապարներից, ինչը թույլ կտար պահպանել բնագրի հանգավորումն ու ոճական ներգործությունը: Մեղք ու կարգ գլխի՝

²⁴ Л. С. Бархударов, Что нужно знать переводчику? («Тетради переводчика», вып. 15, М., 1976, с. 18).

վի կտոր հաց լիճի: Ինքնակերտ նմանակների օրինակները վկայում են անհամարժեքային առածների և ասացվածքների համազոր վերարտադրման սկզբունքային հնարավորության մասին:

Ինքնին հասկանալի է, որ նոր առածներ ու ասացվածքներ ստեղծելիս անհրաժեշտ է պահպանել ժողովրդական բանահյուսության այդ ստեղծագործությունների հիմնական հատկանիշները՝ արտահայտման ձևերի հղվածությունը, հակիրճությունը, պատկերավորությունը, բնութագրումների դիպուկությունը, գունագեղությունը: Այլ կերպ ասած, համարժեքներ շունեցող առածներն ու ասացվածքները պետք է թարգմանել գեղարվեստական միջոցներով, թարգմանել այնպես, որ դրանք կարողանան մտնել լեզվական շրջանառության մեջ, հարստացնել մայրենի լեզվի արտահայտչական միջոցները:

Հայերենում համարժեքներ կամ նմանակներ շունեցող առած-ասացվածքների թարգմանությունների մեջ հանդիպում է նաև նկարագրական (բացատրական) թարգմանության եղանակը: Այն կիրառվել է միայն եզակի դեպքերում, երբ՝ ա) անհամարժեք առածներն ու ասացվածքները իրենց բաղադրիչների իմաստային գործածության պատճառով չեն ենթարկվել պատճենման և բ) լեզվաոճական օբյեկտիվ գործոնների հետևանքով չի հաջողվել նոր առած ստեղծել, քանի որ ռուսական ժողովրդական արտահայտությունների բովանդակության արտահայտման ինքնօրինակ ձևերը բերեմն այնքան խորթ են հայկական լեզվամտածողությանը, որ շատ դժվար է լինում (եթե չասենք անհնարին) ռուսական առածի բովանդակությունն ամփոփել հայկական առած-ասացվածքային կաղապարների մեջ: Օրինակ. Овчинка выделки не стоит (36, 250; 55, 65) — Չարժեք ջանք թափել (36, 306), Չարյաբանքը չարժեք (55, 77), Моя хата с краю — ничего не знаю (7, 242; 16, 394) — Իմ ինչ գործն է (7, 305), Դա մեզ չի վերաբերում (16, 487), Свет не клином сошелся (15, 52) — Դեռ ամեն բան վերջացած չէ (15, 62) և անլի: Բերված օրինակները ցույց են տալիս, որ առած-ասացվածքների նկարագրական վերարտադրումը թույլ է տալիս ստույգ հաղորդել դրանց իմաստը, սակայն զրկում է բնագրի արտահայտությունները պատկերավորությունից և հուզականությունից: Այդ եղանակով թարգմանելիս չի հաջողվում պահպանել առած-ասացվածքների, որպես խոսքի պատկերավորման և ոճավորման միավորների, հատկանիշները: Ժողովրդական իմաստությունը մարմնավորող արտահայտությունները վերածվում են վերացական դատողություններ արտահայտող սովորական բառակապակցությունների և ընթերցողի կողմից ընկալվում որպես հեղինակի անհատականացված ասույթներ: Դա իր հերթին հանգեցնում է նրան, որ հեղինակի նախատեսած ոճական ներգործությունն իր լիակատար արտացոլումը չի գրտնում թարգմանության մեջ: Այսպես, Վ. Ի. Լենինի երկերում երկու անգամ օգտագործված Вольному воля առածը թարգմանված է նկարագրական տարբեր բառակապակցություններով, որոնք ճիշտ են հաղորդում ժողովրդական արտահայտության իմաստը, բայց նկատելիորեն թուլացնում են բնագրի արտահայտչականությունն ու հուզական ներգործությունը. Вольному воля — но только дело вы делаете, господа, вовсе не социал-демократическое, а либеральное (22, 317) — Ազատ եք անել ինչ ցանկանում եք. բայց միայն պարոնայք, դուք ամենևին սոցիալ-դեմոկրատական գործ չեք անում, այլ՝ լիբերալ (22, 385), Не хотите? — вольному воля, но тогда не плачьтесь, если через несколько месяцев останетесь совсем без рабочих... (24, 312) — Չե՞ք ուզում, ձեռ ազատ կամքն է. բայց այն ժամանակ լաց չլինեք, եթե մի քանի ամիս հետո բոլորովին առանց բանվորների մնաք... (24, 381): Հետևաբար, նկարագրական թարգմանության եղանակին հակավոր է դիմել միայն բացառիկ դեպքերում, երբ ուրիշ ելք չկա:

Այսպիսով, Վ. Ի. Լենինի երկերում օգտագործված առածների և ասացվածքների հայերեն թարգմանությունն իրականացվել է հինգ եղանակով, որոնցից յուրաքանչյուրի ընտրությունը պայմանավորված է եղել լեզվաոճական և արտալեզվական որոշակի գործոններով:

АРМЯНСКИЙ ПЕРЕВОД ПОСЛОВИЦ И ПОВОРОК. ИСПОЛЬЗОВАННЫХ В ПРОИЗВЕДЕНИЯХ В. И. ЛЕНИНА

АРАМ САРКИСЯН

Резюме

В произведениях В. И. Ленина щедро использована богатая россыпь пословиц и поговорок. Примененные В. И. Лениным образные народные изречения являются органической частью системы доказательств, исторического и социологического анализа. Их правильное и уместное использование придает речи убедительность, неповторимое своеобразие и образность.

Поскольку пословично-поговорочные изречения являются одним из выразительных средств языка и выделяются своими стилистическими функциями в речи, они требуют особого подхода при переводе. Составительно-лингвистический анализ пословично-поговорочных изречений оригинала и их армянских переводов выявляет способы и принципы перевода на армянский язык рассматриваемых типов фразеологических единиц, устанавливает степень их семантико-стилистического соответствия оригиналу, а также раскрывает причины некоторых неточностей в передаче указанных оборотов. Анализ фактического материала показывает, какую огромную роль сыграли переводы произведений В. И. Ленина в обогащении выразительных средств армянского языка.